ՏԱԳՆԱՊՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՀՈՒՅՍԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ պատասխանները Արմենպրեսի թղթակցի հարցերին

— Ըստ էության, Մոսկվայում հենց նոր ավարտվեց Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսների Կենտկոմների բյուրոների անդամների և անդամության թեկնածուների հանդիպումը: Ինչո՞վ էր պայմանավորված այդ հանդիպումը:

— Ես օրերս Հայկական հեռուստատեսությամբ ունեցած իմ ելույթում արդեն նշել եմ, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածության ծավալումը հասել է չափազանց վտանգավոր մակարդակի: Երկու ժողովուրդները հասել են իր հետևանքներով անկանխատեսելի առճակատման: Կոնֆլիկտը կարող է վերածվել ազգամիջյան պատերազմի:

Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն խիստ մտահոգված է դեպքերի զարգացման նման ընթացքով և լրիվ չափով կիսում է հանրապետության աշխատավորության տագնապը Ադրբեջանում ստեղծված ճգնաժամային իրադրության և Լեռնային Ղարաբաղում հայրենակիցների վիճակի կապակցությամբ: Մենք պաշտպանեցինք ԽՄԿԿ Կենտկոմի առաջարկությունը Մոսկվայում անցկացնելու հանրապետությունների կոմկուսների կենտկոմների բյուրոների անդամների և անդամության թեկնածուների հանդիպում՝ ռեգիոնում ստեղծված իրավիճակը ազնվորեն վերլուծելու, ազգամիջյան կոնֆլիկտը սրած պատճառների շուրջը կարծիքներ փոխանակելու, երկու հարևան ժողովուրդների հարաբերությունների և իրադրության կարգավորման ուղիներ նշելու համար:

Այժմ Մոսկվայում տեղի ունեցած հանդիպման մասին: Այն օգտակար էր, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամները և անդամության թեկնածուները հստակորեն և հաստատակամորեն արտահայտեցին մեր դիրքորոշումները ամբողջ ժողովրդին հուզող բոլոր պրոբլեմների առթիվ: Մենք ամենայն որոշակիությամբ նշեցինք. երկու հանրապետությունների հարաբերությունների կարգավորումը հնարավոր է միմյանց ընդառաջ քայլեր կատարելու, փոխզիջումների համատեղ որոնման պայմանով:

Այս հանդիպման նշանակությունն այն է, որ առաջին անգամ նման մակարդակով երկու կողմերը ուղղակի երկխոսություն սկսեցին: Իհարկե, կային լուրջ տարաձայնություններ, բայց երկու հանրապետությունների կոմկուսների կենտկոմների բյուրոների անդամները և անդամության թեկնածուները միահամուռ էին այն հարցում, որ չնայած ռեգիոնում ազգամիջյան հարաբերությունների ամբողջ բարդությանը, չկա այնպիսի հարց, որի լուծումը հնարավոր չլինի գտնել փոխադարձ հանդուրժողության, երկու ժողովուրդների ճակատագրերի նկատմամբ խոր շահագրգռության դեպքում: Իհարկե, ռեգիոնում հաշտության և անդորրի ճանապարհին կուտակումներն այնքան մեծ են, որ կողմերի գոյություն ունեցող տարաձայնությունների պայմաններում մեկ հանդիպումով բոլոր պրոբլեմները չեն լուծվի:

Կարծիքների լայն փոխանակման ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց երկու հանրապետությունների, առաջին հերթին կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների ջանքերով ամեն ինչ անել քայլ առ քայլ վերացնելու կուտակված հարցերը, կոնստրուկտիվ երկխոսություն անցկացնել բոլոր մակարդակներով:

— Շատերին հուզում է այն հարցը, թե այդ հանդիպման ժամանակ ինչ տեսանկյունից է քննարկվել ԼՂԻՄ-ի պրոբլեմը:

— Նախ և առաջ կուզենայի ասել հետևյալը. Լեռնային Ղարաբաղի առթիվ մեր դիրքորոշումը հստակորեն և միանշանակ կերպով արտահայտվեց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում: Այդ դիրքորոշումը մեր ժողովրդի կամքի արտահայտությունն է, և մենք հայտարարեցինք, որ մտադիր չենք դրանից շեղվել: Միևնույն ժամանակ երկխոսության և ազգամիջյան հաշտեցման ուղիներ կորոնենք, մեզանից կախված ամեն ինչ կանենք, որպեսզի վերջ տրվի ազգամիջյան թշնամանքին, որպեսզի Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդների միջև հաստատվեն նորմալ հարաբերություններ: Ի դեպ, սա է 1989 թվականի օգոստոսի 29-ին Հայկական հեռուստատեսությամբ իմ ունեցած ելույթի իմաստը:

Հանդիպման մասնակիցները մեծ ուշադրություն դարձրին Լեռնային Ղարաբաղի պրոբլեմին: Մեր ժողովրդին խորապես հուզող այդ հարցը առանցքային էր Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամների ելույթներում: Ադրբեջանում, ԼՂԻՄ-ում և Հայաստանում քաղաքական լարվածությունը և հասարակական կլիման իրար հետ կապված են հաղորդակցվող անոթների օրենքով: Ուստի և ռեգիոնի իրադրության կարգավորմանը հարկավոր է մոտենալ կոմպլեքսայնորեն: Միանվագ ներարկումներով և տեղային միջոցառումներով դժվար է հասնել իրադրության առողջացման: Այդ մասին մենք սկզբունքորեն խոսեցինք Մոսկվայի հանդիպման ժամանակ: Ինչ վերաբերում է ԼՂԻՄ-ի պրոբլեմը որպես մտացածին ներկայացնելու փորձերին, դրանք լուրջ չեն և հակահարված ստացան մեր կողմից: Հայերի համար ցավոտ այդ հարցը գոյություն ունի վաղուց, ունի պատմական արմատներ, խորհետք է թողել ազգային գիտակցության մեջ: Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու վերաբերյալ 20-ական թվականների սկզբներին կայացված որոշումը հայ ժողովրդի կողմից ընդունվեց որպես ազգային անարդարության փաստ: Ինչպես ես արդեն բազմիցս ասել եմ, ներկա իրավիճակի սրման ակունքները պատմական, սոցիալական, մշակութային, տնտեսական, էթնիկական պրոբլեմների բարդ միահյուսման, ազգային քաղաքականություն վարելիս թույլ տրված լուրջ սխալների մեջ են:

ԼՂԻՄ-ի հարցի լուծման մեջ բախվել են փաստորեն երկու իրավական սկզբունքներ. ազգերի ինքնորոշման իրավունքը և հանրապետության սահմանները առանց նրա համաձայնության փոփոխելու անհնարինությունը: Բայց չէ որ ազգերի ինքնորոշման իրավունքը ավելի բարձր, նշանակալի և, որ գլխավորն է՝ ավելի բարոյական է մյուս բոլոր սկզբունքներից: Դա պաշտպանում էր Վ. Ի. Լենինը դեռ դարասկզբին: Այս գաղափարը, ինչպես նշված է ԽՄԿԿ պլատֆորմում, առանցքային է ազգային հարցում սոցիալիստական ծրագիրն իրականացնելիս:

Ցավոք, դեմոկրատական ընկալումները դժվարությամբ են իրենց համար ուղի հարթում: Ուստիև լինենք իրատես և, որքան էլ դա դժվար լինի, փնտրենք փոխզիջողական ուղի: Հանդիպման ժամանակ մեկ անգամ ևս ընդգծեցինք, որ անհրաժեշտ է անհապաղ վերականգնել ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների խորհրդի, ինչպես նաև կուսակցության մարզկոմի լիազորությունները, դրանք ենթարկելով կենտրոնական կուսակցական ու խորհրդային մարմիններին, այսինքն հասնել մարզի իրական ենթակայությանը կենտրոնին:

Բայց, համաձայնեք, քանի դեռ անմեղ արյուն է հոսում, մինչև օրս մարդիկ են զոհվում, չի դադարում գաղթականների հոսքը, քանի դեռ ծխում են հրկիզված տները, քանի դեռ մեր խաղաղ ժամանակներում ավտոմոբիլային ճանապարհներն ու երկաթուղիները ոչ թե միացնում, այլ անջատում են մարդկանց, անհրաժեշտ է անհապաղ ամենաարմատական միջոցները ձեռնարկել ռեգիոնում տարրական, քաղաքակիրթ հասարակության բնորոշ իրավակարգի պահպանման նպատակով:

— Ռեգիոնի իրադրության կարգավորման ի՞նչ ուղիներ էին տեսնում հանդիպման մասնակիցները:

— Մենք առաջարկեցինք առաջին հերթին ընդունել երկու հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինների համատեղ դեկլարացիա, որը կերաշխավորեր բնակչության անվտանգությունը, կդատապարտեր ցեղասպանությունը, վանդալիզմը և մարդկայնության դեմ ուղղված բռնության մյուս գործողությունները: Ռեգիոնի իրադրության կարգավորման համար չափազանց կարևոր է բնակչության անվտանգության երաշխիքներ ապահովել թե մեկ և թե մյուս հանրապետությունում: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամները ամբողջ սրությամբ առաջադրեցին Ադրբեջանում ապրող հայ բնակչության անվտանգության երաշխիքների հարցը:

Համաձայնություն ձեռք բերվեց ցավոտ հարցերից մեկի՝ ԼՂԻՄ-ի շրջափակման վերացման շուրջը: Կողմերը փոխադարձ պարտավորություններ ստանձնեցին ապահովելու երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտի անխափան և անվտանգ աշխատանքը երկու հանրապետությունների տարածքներում:

Հանդիպման ընթացքում կողմերը առանձնահատուկ ուշադրություն դարձրին գաղթականների պրոբլեմին. տասնյակ հազարավոր մարդիկ զրկանքներ են կրում, անօթևան են և գոյության միջոցներ չունեն: Հանդիպման ժամանակ խորապես և լրջորեն քննարկվեց այդ պրոբլեմի հետ կապված հարցերի ամբողջ համալիրը: Հանդիպման մասնակիցներն այն կարծիքին էին, որ անհրաժեշտ է վերականգնել անմեղ կերպով տուժած այդ մարդկանց բոլոր քաղաքացիական իրավունքները: Մենք հանգեցինք այն հետևության, որ հարկավոր է փոխհատուցել անձնական գույքին պատճառված վնասը, լուծել վերջին աշխատավայրի եռամսյա վաստակի չափով միանվագ նպաստ տալու հարցը: Ավելի մեծ հաստատակամությամբ հարկավոր է լուծել գաղթականների պրոբլեմները և առաջին հերթին հոգալ նրանց բնակարանով և աշխատանքով ապահովելու մասին: Ժամանակն է, վերջապես, լուծելու նրանց կուսակցական և կոմերիտական հաշվառման վերցնելու հարցը:

Չէինք ուզենա այստեղ զբաղվել փոխադարձ մեղադրանքներով ու կշտամբանքներով, բայց այնպիսի զգայուն ոլորտում, ինչպիսին են ազգամիջյան հարաբերությունները, մանրուքներ չկան:

Ասենք, ինչպես կարելի է մանրուք անվանել այն ամենը, ինչը նման է վառոդի տակառում վառվող լուցկու: Խոսքը մտավորականության, մասնայական ինֆորմացիայի միջոցների բռնած դիրքի մասին է:

Օրինակների համար հեռու գնալու կարիք չկա: Վերհիշենք թեկուզ Բաքու քաղաքի մտավորականության ժողովի դիմումը ադրբեջանական ժողովրդին: Այդ դիմումը խիստ բացասական արձագանք առաջացրեց Հայաստանում: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն դատապարտեց այն, բնութագրելով որպես անպատասխանատու, քաղաքականապես վնասակար ձեռնարկում:

Մոսկվայի հանդիպման ժամանակ որոշվեց այսուհետև երկու հանրապետությունների մասսայական ինֆորմացիայի միջոցներում թույլ չտալ մարդկանց ազգային արժանապատվությունը վիրավորող, ռեգիոնի իրադրությունը սրող նյութերի հրապարակումներ: Մյուս համաձայնությունների թվում է Ադրբեջանի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում կուսակցական, խորհրդային, իրավապահ մարմինների և հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ խառը հանձնաժողովների ստեղծումը բոլոր վիճելի հարցերի քննարկման և բոլոր կոնֆլիկտային իրավիճակների օպերատիվ լուծման համար:

Ենթադրվում է նաև ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ հանդիսացող ոչ պաշտոնատար անձանցից ստեղծել հանձնաժողով՝ հանրապետությունների հասարակական կազմակերպությունների իրադրության կարգավորման աշխատանքները կոորդինացնելու համար: Նաև հուսով եմ, որ շուտով ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հովանու ներքո կսկսի գործել երկու հանրապետությունների գիտնականներից կազմված հանձնաժողով, որը կզբաղվի պատմական իրադարձությունների ու փաստերի հարցերին առընչվող վեճերի ու տարաձայնությունների քննարկմամբ:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամները միահամուռ այն կարծիքը հայտնեցին, որ ԼՂԻՄ-ին առընչվող ամեն տեսակ հարցերի քննարկումը պետք է անպայման անցկացվի մարզի ներկայացուցիչների մասնակցությամբ:

— Ինչպե՞ս է ձեզ ներկայանում երկու հանրապետությունների առաջին ղեկավարների դերը ստեղծված իրադրությունում:

— Որպես Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, որպես իմ ժողովրդի զավակ, ես պատասխանատվություն եմ կրում ոչ միայն կուտակված ազգային պրոբլեմների լուծման համար, այլև հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու կյանքի, բարօրության համար: Մեր ժողովուրդը բավականաչափ վիշտ է տեսել: Արյունահեղությունը և բռնության սաստկացումը փակուղի տանող ճանապարհ են: Այս ճշմարտությունը պետք է լավ յուրացնեն բոլոր նրանք, ովքեր ապարդյուն կերպով փորձում են ոչ դեմոկրատական միջոցներով խանգարել Ղարաբաղյան պրոբլեմի լուծմանը:

Իմ կարծիքն այն է, որ ռեգիոնի իրավիճակի կտրուկ սրման ֆոնի վրա, ԼՂԻՄ-ի, երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների շրջափակման, ազգամիջյան հողի վրա հաճախակի դարձած բախումների կապակցությամբ, որոնք հանգեցրին հայ գաղթականների նոր ալիքի, երկու հանրապետությունների ղեկավարները պարտավոր են հանդես գալ առավել կշռադատված, կոնստրուկտիվ դիրքերից, համատեղ որոնել խելամիտ փոխզիջումներ: Թշնամանքը առհասարակ ոչ մեկին օգուտ չի բերել: Մենք ուզում ենք կամուրջներ գցել ազգային տարանջատվածության անդնդի վրայով:

Հանդիպման ընթացքում մենք մեր դիրքորոշումն արտահայտեցինք ազգամիջյան հարաբերությունների բոլոր հարցերի առթիվ և, իհարկե, շատ կարևոր է, որ հանդիպմանը մասնակցում էին ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամներ, ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարներ Ն. Ն. Սլյունկովը և Վ. Մ. Չերբրիկովը: Նրանք անկեղծ մտահոգությամբ, մեծ նրբանկատության զգացումով, շահագրգիռ կերպով մոտեցան բոլոր պրոբլեմների քննարկմանը, կրկին հավաստեցին, որ հաստատակամ որոնվում են ղարաբաղյան հանգույցի լուծման ուղիները, որ այդ հարցը կդրվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի քննարկմանը:

Ուզում եմ խոսել ևս մի հարցի մասին: Աղետյալ գոտում քաղաքներն ու գյուղերը վերականգնելով, գաղթականներին բնակարանով ապահովելու և աշխատանքի տեղավորելու մասին հոգալով, մենք պետք է միշտ հիշենք Արցախի մեր եղբայրների և քույրերի մասին: Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցները այսօր ավելի, քան երբևէ, մեր աջակցության կարիքն ունեն: